Քաղվածք
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
Բաժնետերերի Տարեկան Ժողովի
29.04.2016թ. N 1
Արձանագրությունից

ք. Երևան
ժ. 11.00
/Երևանի ժամանակով/

Ներկա էր Ընկերության թվով 35 000 (100%) ձայնի իրավունք տվող բաժնետոմսերով միակ բաժնետերը

1. Վիտալի Սարգսի Գրիգորյանց

Ժողովի նախագահող՝ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Խորհրդի նախագահ Վիտալի Գրիգորյանց, քարտուղար՝ Իրինա Աստվածատրյան:

ՕՐԱԿԱՐԳ.

.....

2. Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատման, տարեկան շահութաբաժինների վճարման և տարեկան շահութաբաժինների չափի հաստատման վերաբերյալ:

....

Օրակարգի երկրորդ հարցով՝

ԼՍԵՑԻՆ.

Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատման, տարեկան շահութաբաժինների վճարման և տարեկան շահութաբաժինների չափի հաստատման վերաբերյալ հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Վարչության անդամ - Գլխավոր հաշվապահ Նարինե Սարգսյանը ներկայացրեց 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա համար համապարփակ ֆինանսական արդյունքների, ֆինանսական վիճակի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ հաշվետվությունները:

Նարինե Սարգսյանը զեկուցեց, որ նշված հաշվետվությունները Բանկի 2015թ. ֆինանսատնտեսական գործունեության ստուգման շրջանակներում ներկայացվել են «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ին և հավելեց, որ Անկախ աուդիտորական ընկերությունը ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ տվել է առանց վերապահումների դրական կարծիք:

Քննարկելով ներկայացված հարցը՝ Խորհրդի նախագահ Վիտալի Գրիգորյանցը առաջարկեց հաստատել Բանկի 2015թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները:

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ ժողովի մասնակիցների կողմից առարկություններ չեղան:

ԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ.

1. Հաստատել «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ 2015 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները, այդ թվում «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ 2014 թվականի տարեկան հաշվեկշիռը 2015 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, շահույթների և վնասների բաշխումը:
2. 2015 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով Բանկի տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարել:
3. Ստացված 1,243,778,000 (մեկ միլիարդ երկու հարյուր քառասուներեք միլիոն յոթ հարյուր յոթանասունութ հազար) ՀՀ դրամ գումար զուտ շահույթը (հարկերի վճարումից հետո մնացած), բաշխել հետևյալ կերպ՝
   ա) կատարել պահուստային ֆոնդի (գլխավոր պահուստի) համալրում նշված գումարի 5 տոկոսի՝ 62,188,900 (վաթսուներկու միլիոն հարյուր ութսունութ հազար ինը հարյուր) ՀՀ դրամի չափով.
   բ) մնացած 1,181,589,100 (մեկ միլիարդ հարյուր ութսունմեկ միլիոն հինգ հարյուր ութսունինը հազար հարյուր) ՀՀ դրամի չափով գումարը ուղղել Բանկի «Նախորդ տարիների շահույթ/վնաս» հաշվեկշռային հաշվին:

.....

Բաժնետերերի Արտահերթ Ընդհանուր ժողովի ընթացքում այլ հարցեր չեղան:

Օրակարգի հարցերի սպառման պատճառով՝ ժողովը հայտարարվեց փակված:

ժողովի նախագահ՝ Վ. Գրիգորյանց

/ստորագրություն/

ժողովի քարտուղար՝ Ի.Աստվածատրյան

/ստորագրություն/

Խորհրդի քարտուղար՝ Ի.Աստվածատրյան

Իսկականի հետ ճիշտ է՝
Աշխատակազմի ղեկավար՝ Մ. Ստեփանյան